

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гохар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR - “MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան – ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ – ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян – СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan – THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան – ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян – РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan – THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան – ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian – ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան – ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян – ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan – GERMANY’S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան – ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎՆԱՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян – НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian – ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան – ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лиза Каримян – КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS). 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY). 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱՎԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА. 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS. 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ. 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США. 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA. 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА. 272

Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY. 273

Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 274

Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА. 280

Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN. 281

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY

Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)..... 282

Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ. 289

Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN. 289

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Էրիկ Գալեգիսի ՄիլաՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ 298

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ 315

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 318

INFORMATION ABOUT THE AUTHORS 320

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 322

NOTICE FOR THE AUTHORS 322

Սարգիս Մկրտչեան

**ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ - 21- ՐԴ
ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ**

Հիմնաբառեր. Իրան, ակերի, Ատրպատական, Ադրբեյջան, պանթիրքիզմ, գաղափարախօսութիւն, Չիյա Գէօքալի, Մոհամմադ Ամին Ռասուլպաղէ, Սէյէդ Ջաֆար Փիշկարի:

ՄՈՒՏԵ

1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական յեղափոխութեան հետևանքով ԱՄՆ-ի և Իրանի Իսլամական Հանրապետութեան յարաբերութիւնները դարձան թշնամական, իսկ 1991 թ. Խորհրդային Միութեան փլուզումով՝ ԱՄՆ-ը, որն արդէն իրեն անմրցակից էր տեսնում աշխարհում, փորձեց իր հեգեմոնիան տարածել գրեթէ ամենուր:

Ուստի Խորհրդային Միութեան փլուզումը պատճառ դարձաւ, որ տարածաշրջանով հետաքրքրուած տերութիւնները և անդրազգային ուժերը փորձեն պատեհ առիթն օգտագործելով՝ իրենց ազդեցութիւնը տարածել արդէն փոփոխուող աշխարհում: Իսկ Ադրբեյջանի արհեստածին Հանրապետութեան վերանկախացումը 1991 թ.՝ պանթիրքական ուժերի համար լաւագոյն առիթ դարձավ կրկին անգամ վերարժարծելու և հետապնդելու Իրանի Ատրպատականի հանդէպ իրենց վաղեմի յաւակնութիւնները: Այս հանգրուանից Իրանի այդ երկրամասի շուրջ հակաիրանական, հակահայկական և հակառուսական ուժերի շահերը համընկան և այն տպաւորութիւնը կայ, որ կազմուել է անպաշտօն մի ճակատ:

Իրանի իսլամական յեղափոխութիւնից յետոյ հակաիրանական ուժերը, ի թիւս տարատեսակ բազմաթիւ խնդիրների, սկսեցին արձարծել Իրանի էթնիկ խմբերի հարցը: Մէկ անգամ ևս հրապարակ բերուեցին Իրանի քրդերի, ազերիների, բելուջների և այլ խմբերի երբեմն՝ իրական, իսկ անելի յաճախ՝ անիրական և արհեստական խնդիրները:

Սակայն Իրանի էթնիկ խմբերի ենթադրեալ կամ իրական հարցերի բարձրաձայնումը միայն Իրանի և այս կամ այն երկրի փոխյարաբերութիւնների արդիւնք չէր: Իրականում Իրանի իսլամական յեղափոխութիւնից յետոյ՝ երկրում հաստատուեց կրօնապետութիւն, որը ելնելով իր գաղափարախօսութիւնից՝ յետին պլան մղեց ինքնութեան ազգային տարրերը և փոխարէնը՝ առաջնահերթութիւն տուեց կրօնական գործօնին, մինչդեռ իրականում դրանք մէկ ամբողջութիւն են կազմում¹: Ինքնութեան ազգային, կրօնական և էթնիկական տարրերը իրար դէմ հանելը կամ մէկին՝ միւսի նկատմամբ գերակայութիւն տալը՝ բերեց անհամաչափութեան և ինքնութենական որոշ հարցերի:

Իրանցի բազմաթիւ հետազոտողներ այն կարծիքին են, որ դրանով իշխանութիւնը կատարեց ռազմավարական մեծ սխալ, որը հետագային անելի խորացաւ: Այդ խորացմանը նպաստեց ներքաղաքական մրցակցութեան պատճառով քաղաքական տարբեր հոսանքների կողմից էթնիկ խմբերի գործօնը շահարկելը, որը նորանոր սխալների դուռ բացեց:

«ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱԴՐԲԵՅԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՕՆՔԻ ՇԱՐԺՈՒՄ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

20-րդ դ. վերջերին-21-րդ դարի սկզբներին Իրանի ազերիաբնակ շրջաններում կամ Իրանից դուրս, մէկը միւսի յետևից, սկսեցին ի յայտ գալ կազմակերպութիւններ, որոնք ար-

* Հոդվածը ներկայացվել է 21.11.2020 թ., գրախոսվել՝ 03.12.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ حمید احمدی، هویت ملی ایرانی: بنیادها، چالش ها و بایسته ها، نامه پژوهش فرهنگی، سال هفتم، دوره جدید، شماره ۶، تابستان ۱۳۸۲

ծարձում էին (և են) տարատեսակ պահանջներ: Դրանք կարելի է դասակարգել այսպես ասած՝ նուազագույնից առաելագույն չափի: Որոշները խօսում են լեզուական և մշակութային ազատությունների մասին, միևնույնը՝ դաշնային Իրանի սահմաններում ալեյի լայն ինքնավարություն ունենալու, ուրիշները՝ Իրանից անկախութեան կամ Ադրբեջանի Հանրապետությանը միանալու մասին:

Առաջին հայեացքից թույլ է, որ այդ կազմակերպությունները ծնունդ են ժողովրդի ծոցից, ինքնաբուխ են, ինքնուրոյն են, մեծ ցանց ունեն և այլն: Սակայն դա միայն առաջին հայեացքից: Այս կազմակերպությունների ծրագրերի, գործունեության, ղեկավարների ելույթների, հարցազրույցների, նրանց կայքէջերում տեղադրուած յօդուածների ուսումնասիրութիւնը վկայում է այլ բանի մասին: Դրանցից մէկը **Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի շարժում** (ՀԱԱԶՇ) է¹, որը հիմնադրուել է 1995 թ.²:

Կազմակերպութեան «Նպատակներ» բաժնում գրուած է. «Ըստ ՀԱԱԶՇ-ի՝ միայն Մարդու իրաւունքների հռչակագրերի դրոյթների և ժողովրդավարութեան պայմանով է, որ կարելի է Իրանում բնակուող վեց ազգերի միջև՝ թուրք, քարս, քուրդ, արաբ, բելուջ և թուրքմէն, դաշնային և համադաշնային ձևով և համահաւասար իրաւունքների հիման վրայ ձեռք բերել ժողովրդավարական համակեցութիւն՝ համաշխարհային օրէնքների հիման վրայ»³: Մինչդեռ կազմակերպութեան ղեկավար Չեհռեգանիյն իր հարցազրույցներից մէկում նշում էր, որ ինքը չի կարող ասել, թէ հետագայում ինչ է պատահելու, յամենայնդէպս «Սա մի քայլ է դէպի անկախութիւն... Սա ամենայարմար բնորդն է ներկայ կացութեան մէջ, և մենք այժմ պահանջում ենք դաշնային համակարգ, որից մինչև անկախութիւն մէկ քայլ է»⁴:

Ծրագրի մէկ այլ տեղում գրուած է. «ՀԱԱԶՇ-ը 16 դեկտ. 1966 և 15 դեկտ. 1948 թթ. բանաձևերի և Մարդու իրաւունքների հռչակագրի և Միջազգային իրաւունքների հիման վրայ պայքարում է Հարաւային Ադրբեջանի ազգի «ինքնորոշման իրաւունքի» ուղղութեամբ, և այս պայքարը կարգաւորում է «թուրքիզմ, արդիականութիւն և մտքի ու խօսքի ազատութիւն» երեք սկզբունքների հիման վրայ»⁵: Այլ տեղ նշուած է. «Վերջնական նպատակը Ադրբեջանի Հանրապետութեանը միանալն է»⁶: Այլ խօսքով՝ կազմակերպութիւնն անջատողական նպատակներ է հետապնդում:

Կազմակերպութեան ծրագրի «Հիմնական սկզբունքներ» բաժնը գլխաւորապէս հիմնուած է Չիա Գեօբալիի հայեացքների վրայ: Այս բաժնին սկսում է թուրքիզմի մասին Գեօբալիից մեջբերումով. «**Թուրքիզմ** նշանակում է ճիգ՝ թուրք ազգի երջանկութեան և հպարտութեան համար»⁷: Աւելորդ է անգամ յիշեցնել, որ թուրքիզմը Թուրքիայի պաշտօնական գաղափարաբանութիւնն է. հետևաբար ինչքան էլ փորձ արուի Իրանում «մարդու իրաւունքների ոտնահարման», «փոքրամասնութեան իրաւունքների բռնաբարման», «պարսկական շովինիզմի» և այլնի ներքոյ հիմնաւորել սեփական պայքարը, հնարաւոր չէ քողարկել որ այն պանթիւրքական շարժում է, որի վերջնականապէս շարադրուած է Գեօբալիի գրութիւններում: Վերջինիս տեսակետից թուրքիզմն ընդամենը պանթուրանիզմի առաջին աստիճանն է,

¹ <http://gamoh.org/> եւ <http://www.gamoh.biz/> (21.03.2017 թ.), տե՛ս նաեւ <http://gamoh.org/> եւ <http://www.gamoh.biz/> (21.03.2017 թ.):

² Կազմակերպութեան կայքի հասցէն է <http://gamoh.org/> և <http://www.gamoh.biz/>: Կայքում պետեղուած է կազմակերպութեան ծրագիրը: Կայքի վերևի մասում տեղադրուած է կազմակերպութեան պիւնակները և Հարաւային Ադրբեջանի դրօշը: Դրօշի կենտրոնում պետեղուած է լուսնեղջիւր և ութանկյուն աստղ: Նոյնը՝ ինչ կայ Ադրբեջանի Հանրապետութեան դրօշի կենտրոնում: Սակայն թէև գոյները Ադրբեջանի Հանրապետութեան դրօշի գոյներն են, սակայն ձևի առումով տարբերում են նրանից:

Տե՛ս նաեւ http://en.wikipedia.org/wiki/Southern_Azerbaijan_National_Awakening_Movement

³ <http://gamoh.org/> (21.03.2017 թ.):

⁴ http://csis.org/files/media/isis/events/020808_remarks.pdf կամ

https://csis-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy_files/files/attachments/020808_Iran_remarks.pdf (22.03.2017 թ.):

⁵ <http://gamoh.org/> (21.03.2017 թ.):

⁶ Նոյն տեղում:

⁷ Նոյն տեղում:

ուստի երբ ծրագրի «Մտքի և խօսքի ազատություն» բաժնում նշում է, որ. «Ադրբեջանի ազգային զարթոնքի շարժումը¹ թուրքիզմի ուսմունքի հիման վրայ կարողացել է Հարաւային Ադրբեջանում ողջ ոչ ազգային մտածողությունները մեկուսացնել, սակայն չպիտի այնպես ընկալուի, որ մեր շարժումը ամբողջատիրական և մենաշնորհեալ է, այլ ընդհակառակը. այս շարժումը, որպես մի շարժում, որն առաջացել է ժամանակի պահանջներից ելնելով, մտքի ու խօսքի ազատությունը որդեգրել է որպես իր հիմնական սկզբունքներից մեկը: Այս բոլոր կետերը նկատի առնելով՝ Հ.Ա.Ա.Չ.Շ.-ն այն համոզմանն է, որ ամեն մի ադրբեջանցի թուրքի ազգային մտածողությունը կարելի է հետևեալ կերպ արտայայտել. «Թուրք եմ, ժամանակակից եմ, ազատ եմ»²:

Հարց է առաջանում՝ ինչպես են պատկերացնում ոչ ազգային մտածողությունները մեկուսացնողները մտքի ու խօսքի ազատությունը, երբ իրանում դրանցից ամենաազդեցիկը՝ իսլամական յեղափոխութեան գաղափարաբանությունը կոչուած է ոչ ազգային հիմքի վրայ համախմբելու երկրի տարբեր ազգությունների ներկայացուցիչներին: Միայն այն փաստը որ «Հարաւային Ադրբեջանի ազգային զարթոնքի շարժման» ծրագրում, ինչպես նաև նրա կայքի տարբեր բաժիններում մեջբերուում են Մոհամմադ Ամին Ռասուլզադէի և Աբուլֆազլ Էլչիբեյի մտքերը ինքնին վկայում է այն մասին, որ դա անջատողական կազմակերպություն է:

Ռասուլզադէն իր «Ադրբեջանի Հանրապետություն. ձևաւորումը և ներկայիս իրավիճակը»³ աշխատութեան մէջ, որը հրատարակուել է 1923 թ. Ստամբուլում, գրում էր. «Թուրքիան՝ խալիֆայութեան պատասխանատուն է ու համարում է իսլամական աշխարհի միասնութեան կենտրոնը: Նորագոյն Թուրքիան, որը հիմնադրուել է ազգային ինքնիշխանութեան հիման վրայ, թուրք ցեղախմբերի յոյսն է: Մեծ Թուրքիան ազգային փառահեղ գաղափարների յաղթանակի դրօշակակիրն է, Արևելքի ժողովուրդների երազանքների ջահակիրը»⁴:

1992 թ., երբ Էլչիբեյը Ադրբեջանի նախագահն էր, բացայայտ կերպով խօսում էր պանթուրքիզմի և Հարաւային ու Հիւսիսային Ադրբեջանների միացման մասին: Էլչիբեյն յայտարարում էր, որ պետք է Թուրքիայի հետ կազմել համադաշնություն «..որտեղ 40 միլիոն ազերիները Անատոլիայի 70 միլիոն թուրքերի հետ կազմելու են 110 միլիոնանոց երկիր և այս միացումից յետոյ աշխարհին ասենք, որ այս տարածաշրջանում առանց այս վիթխարի երկրի հաւանութեան ոչ մի բան չի կարող կատարուել»⁵:

Հիմք ընդունելով վերոյիշեալը, ինչպես նաև բազմաթիւ այլ փաստեր, անվարան կարելի է եզրակացնել, որ Հ.Ա.Ա.Չ.Շ.-ն հետապնդում է պանթուրքական նպատակներ որոնցով յազեցած է կազմակերպութեան օգտագործած բառապաշարը, նրա ղեկավարների աշխարհահայեացքը և դաւանած գաղափարախօսությունը:

«ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՉԱՐԹՈՆՔԻ ՆՈՐ ՇԱՐՇՈՒՄ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ (YENIGAMOH)⁶

Առաջացել է «Հարաւային Ադրբեջանի ազգային զարթոնքի շարժումի» պառակտումից: Այլ խօսքով Հ.Ա.Ա.Չ.Շ.-ի մի խումբ անդամներ կազմակերպությունից անջատուել և հիմնել են Նոր կազմակերպություն: Սակայն այս Նոր կազմակերպությունն իր գաղափարախօսութեամբ և ծրագրով առաջինից գրեթէ չի տարբերուում: Հիմնական տարբերությունը՝ կազմակերպութեան անուան մէջ «նոր» բառի օգտագործումն է և անդամները:

¹ *Բնագրում «Հարաւային» բառը չի գրուել, որը վրիպում է իրենց կողմից: Թարգմանութեան մէջ հաւատարիմ ենմնացել բնագրին:*

² <http://gamoh.org/> (21.03.2017 թ.):

³ *Azerbaijan Republic: characteristics, formation and contemporary state.*

⁴ محمد امين رسول زاده، جمهوری آذربایجان، چگونگی شکل گیری و وضعیت کنونی آن، ۱۹۲۳ میلادی، استانبول، برگردان تقی سلام زاده، تهران، نشر و پژوهش شیراز، ۱۳۸۰، صفحه ۱۷۶، صفحه ۵

⁵ احمد کاظمی، پان ترکیسم و پان آذربیسیم، انتشارات موسسه فرهنگی مطالعات و تحقیقات بین المللی ابرار معاصر تهران، سال ۱۳۸۵، چاپ نخست، صفحه ۲۷۳، صفحه ۴۴

⁶ <http://www.yenigamoh.com/> (28.03.2017 թ.):

Կազմակերպութեան կայքէջում՝ <http://www.yenigamoh.com/> ներկայացուած են նրա ծրագիրը, կանոնագիրը, գլխաւոր քարտուղարի մասին տեղեկութիւն, Հարաւային Ադրբեջանի դրօշը, Հարաւային Ադրբեջանը UNPO-ում, ուսումնասիրութիւնների կենտրոնը, զանգուածային լրատուամիջոցները և այլ բաժիններ:

Ծրագրում գրուած է. «ԵնիԳԱՄՈՐ կազմակերպութիւնը (Հարաւային Ադրբեջանի ազգային զարթօնքի նոր շարժում) մի քաղաքական կազմակերպութիւն է, որը պայքարում է Հարաւային Ադրբեջանի ազգի ազգային երջանկութեան համար: Այդ պայքարը քաղաքական և քաղաքացիական ձևերով և ազգային մտայնութեան ու փիլիսոփայութեան երեք հիմնական և իսկական տարրի վրայ է հիմնուած, որոնք են **թուրքականութիւնը, արդիականութիւնը և մտքի ազատութիւնը**»¹: Յիշեցնենք, որ սրանք Չիյա Գեօքալփի առաջ քաշած պանթիւրքիզմի հիմնական սկզբունքներն են, այսինքն՝ կազմակերպութիւնը դաւանում է պանթիւրքական գաղափարախօսութիւն:

Ծրագրում նշուած է, որ «ԵնիԳԱՄՈՐ-ի կենտրոնակայանը գտնուում է Հարաւային Ադրբեջանում և ապահովական նկատառումներով նրա **հասցէն չի նշուում**»²: Նրանում տարբեր տեղեր խօսուում է «Հարաւային Ադրբեջանի ազգի» մասին, մինչդեռ յստակ է, որ նման ազգ գոյութիւն չունի: Ակնյայտ է, որ փորձ է արւում արհեստականօրէն կերտել նոր ազգ: Սա ևս պանթիւրքական շարժման առանձնայատկութիւններից մէկն է:

Կազմակերպութեան կայքէջում 2014 թ. դեկտեմբերի 11-ին (իրանական ազարի 20, 1393 թ.) գետեղուել է գլխաւոր քարտուղար Լաթիֆ Հասանիի ստորագրութեամբ մի յօդուած՝ «Մահ կայ, վերադարձ չկայ»³ վերնագրով: Յօդուածի վերնագիրը Ադրբեջանի Դեմոկրատական կուսակցութեան կարգախօսն էր: Այն հրատարակուել է 1945 թ. դեկտեմբերի 12-ի (իրանական ազարի 21, 1324 թ.) առիթով, որը Ատրպատականի Դեմոկրատական Ինքնավար Հանրապետութեան հիմնադրման օրն է:

Այս յօդուածում Հասանին, նկարագրելով Ատրպատականի Դեմոկրատական Ինքնավար Հանրապետութեան ձեռքբերումները և գովելով նրա առաջնորդ Փիշևարիին, խօսում է այն մասին, որ Փահլիւի հարստութիւնը ճնշեց Ատրպատականի Դեմոկրատական կուսակցութեանը և տապալեց ինքնավար հանրապետութիւնը, իսկ Փահլիւիների գործը շարունակում է ԻԻՅ-ն. «Այն ծառայութիւնը որ Փիշևարին մէկ տարուայ ընթացքում մատուցեց Ատրպատականին, Ռեզա Շահը 20 տարուայ ընթացքում չկատարեց»⁴:

Հասանին համոզուած է, որ Իսլամական Հանրապետութեան իշխանութիւնները գործնական քայլեր չեն կատարում փոքրամասնութիւնների նկատմամբ առկայ քաղաքական, տնտեսական ու մշակութային խտրականութիւնների վերացման ուղղութեամբ, նրանք. «...գործնականում ապացուցել են, որ Փահլիւիների փտած նախագծի հետևորդներն են և յայտարարել են, որ լեզուի ուսուցումը էթնիկ խմբերի համար ազգային և, նոյնիսկ, տեղական անհրաժեշտութիւն էլ չէ»⁵:

ԵնիԳԱՄՈՐ-ի կանոնագրում գրուած է, որ 2002 թ. հիմնուել է կազմակերպութեան արտասահմանի մասնաճիւղը, որի գործունեութիւնը կազմակերպութեան բացայայտման պատճառով որոշուել է դադարեցնել 2012 թ.:

«ՀԱՐԱԲԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ»

2004 թ. հիմնադրուած այս կուսակցութեան (ՀԱԱԿ)⁶ կայքի վերին մասում գիւնանշանի կողքին, առանձին տեղադրուած է գորշ գայլի գլխի նկարը: Գորշ գայլը՝ պանթիւրքականների խորհրդանշաններից մէկն է: Կուսակցութիւնն ունի գիւնանշան և դրօշ:

¹ <http://www.yenigamoh.com/index.php/2012-09-07-03-54-51> (28.03.2017 թ.):

² Նոյն տեղում:

³ <http://www.yenigamoh.com/index.php/all-category/maqale/287-2014-12-10-21-29-26> (30.03.2017 թ.):

⁴ Նոյն տեղում:

⁵ Նոյն տեղում:

⁶ www.gaip.org (20.07.2020), տե՛ս նաև <https://gaip.biz> (20.07.2020 թ.):

Դրօշը Ադրբեջանի Հանրապետությանն է՝ կապոյտ, կարմիր և կանաչ, որի աջ կողմում կայ սպիտակ ալիքաձև երիզ. այն խորհրդանշում է իրարից անջատուած երկու, այսպէս կոչուած, Հիւսիսային և Հարաւային Ադրբեջանները: Դրօշի կենտրոնում զետեղուած է լուսնեղջիւր և ութանկիւն աստղ: Նոյնը՝ ինչ կայ Ադրբեջանի Հանրապետութեան դրօշի կենտրոնում:

Կայքում տեղադրուած է կուսակցութեան կանոնագիրը, բայց բացակայում է ծրագիրը: Սակայն կանոնագրում բացի կուսակցութեանը անդամակցութեան պայմաններից, անդամների իրաւունքներից և պարտականութիւններից, առանձին բաժիններով առկայ են «նախաբան», «անկախութեան անհրաժեշտութիւն», «նպատակներ» և այլ բաժիններ, որոնցում ներկայացուում են կուսակցութեան աշխարհայեացքը եւ նպատակները: Կանոնագրի նախաբանում գրուած է. «Երկիրը, որն այժմ Իրան է կոչոււմ, հին ժամանակներից թուրքերի բնակութեան և քաղաքակրթութեան վայրն է եղել: Արիախօսների՝ այս բարձրաանդակ գալուց առաջ շումերները, էլամցիները, կուտիները, ուրարտացիներն ու այլք են այստեղ բնակուել, որոնք այստեղի իրական տերերն են: Թէև Ադրբեջանի թուրքերի մի մասը վերջին հազարամեակում է գաղթել այս վայրեր, սակայն Ադրբեջանի թուրքերի մեծ և հիմնական մասը Շումերի թուրքերի բնական ժառանգորդներն են...»¹:

Սրանք պատմութեան խեղաթիւրում են՝ ո՛չ Իրանն է հին ժամանակներից թուրքերի բնակութեան վայր եղել, և ո՛չ էլ Ադրբեջանի² թիւրքերի մեծ մասը շումերների ժառանգորդներն են: Եւ շարունակութեան մէջ. «Հարաւային Ադրբեջանի անկախութիւն կուսակցութիւնը պայքարում է ամբողջական անկախութեան և Հարաւային Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետութեան հաստատման համար»³:

Կանոնագրի «Նպատակներ» բաժնում գրուած է. «Հ.Ա.Ա.Կ.-ը պայքարում է՝ հիմնելու համար Հարաւային Ադրբեջանի Անկախ Հանրապետութիւն՝ Ադրբեջանի պատմաաշխարհագրական սահմաններում»⁴: «Սահմանում» բաժնի 15-րդ կետում գրուած է. «Հ.Ա.Ա.Կ.-ը, նկատի ունենալով երկու քաղաքական պայմաններում մէկ ազգի իրականութիւնը, Հիւսիսային Ադրբեջանի Հանրապետութիւնը համարում է իր մշտական դաշնակիցը և պաշտպանում է նրա պետութիւնը»⁵, իսկ 16-րդ կետում «Հ.Ա.Ա.Կ.-ի տեսակետից Ադրբեջանի միացման գործընթացը ժամանակի հարց է և ազգի կամքից է կախուած»⁶:

Ուրեմն՝ այս կուսակցութիւնը պայքարում է, այսպէս կոչուած, Հարաւային Ադրբեջանի անկախութեան համար, որը ժամանակաւոր երևոյթ է, իսկ վերջնական նպատակն է միացումը, այսպէս կոչուած, Հիւսիսային Ադրբեջանին, որը ներկայիս Ադրբեջանի Հանրապետութիւնն է:

«Սահմանում» բաժնի 14-րդ կետում գրուած է. «ՀԱԱԿ-ը դատապարտում է հայ բռնագաւթիչներին, որոնք գրաւել են Ադրբեջանի հողը (Ղարաբաղ) և Ադրբեջանի հողի պաշտպանութիւնը իր պարտականութիւնն է համարում»⁷: Սա հակահայկականութեան դրսևորում է, որը պանթիւրքիզմի յատկանիշերից է: Իսկ «նպատակներ» բաժնի 21-րդ կետում գրուած է. «Հ.Ա.Ա.Կ.-ի տեսակետից Հարաւային Ադրբեջանի Անկախ Հանրապետութիւնը աշխարհիկ հանրապետութիւն է»: Սա ևս պանթիւրքիզմի յատկանիշներից մէկն է:

Այլատեացութիւնը պանթիւրքիզմի յատկանիշներից մէկն է, որի վառ վկայութիւնն է «Սահմանում» բաժնի 22-րդ կետը. «Այն անձերի և ուժերի դէպքում, որոնք ղեկավարում են այս պետական համակարգը (խօսքը Իրանի պետական համակարգի մասին է - Ս.Մ.) և գործադրում նման քաղաքականութիւն, եթէ նոյնիսկ պարսիկ էլ չլինեն, խնդիրը չի փոխուի,

¹ <http://www.gaip.biz/index.php/2011-07-05-04-47-42/21-2011-07-05-05-15-59> (20.07.2020 թ.):

² Խօսքը Իրանի Ատրպատականի մասին է:

³ <http://www.gaip.biz/index.php/2011-07-05-04-47-42/21-2011-07-05-05-15-59> (20.07.2020 թ.):

⁴ Նոյն տեղում:

⁵ <http://www.gaip.biz/index.php/2011-07-05-04-47-42/21-2011-07-05-05-15-59> (20.07.2020 թ.):

⁶ Նոյն տեղում:

⁷ Նոյն տեղում:

որովհետև Էուրթեամբ պարսկական շովինիզմի ծառաներն ու գործակալներն են»¹: Սա նշանակում է, որ Իրանում ապրող բազմամիլիոն մարդիկ «պարսկական շովինիզմի» ծառաներն են, որոնց թվում միլիոնաւոր ազերիներ, որոնց մէջ կան մտաւորականներ, գիտնականներ, գրողներ, արուեստագետներ, մարզիկներ, գործարարներ, զինուորներ և այլն: Հարց է առաջանում՝ եթէ կազմակերպութիւնը չի հանդուրժում այլ կերպ մտածող և գործող ազերիներին, ինչպէ՞ս է հանդուրժելու ոչ ազերիներին:

«ԱՂՐԲԵՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ»

Հիմնադրուել է 2006 թ., կայքէջի հասցեն է <https://diranish.org/>² որտեղ տեղադրուած են կազմակերպութեան ծրագիրը, կանոնագիրը, յայտարարութիւնները, գործունեութեան մասին լրատուութիւն: Ծրագիրը վերանայուել է 2011 թուականին: Կազմակերպութիւնը, այս կայքէջից բացի, ունի նաև առանձին պաշտօնական լրատուական կայքէջ՝ <http://www.araznews.org/fa/> անունով³:

Ծրագրի «Նախաբան»-ում գրուած է, որ «Աղրբեջանի թիւրք ազգը թիւրք աշխարհի կարևոր մասերից մէկն է և թիւրքական մեծ քաղաքակրթութեան անմիջական ժառանգորդն է... Աշխարհագրական այն տարածքը, որն այսօր Իրան է կոչուում աւելի քան հազար տարի թիւրքերի իշխանութեան ներքոյ է եղել»⁴:

Այնուհետև նշուում է, որ Գիւլիստանի (1813 թ.) և Թիւրքմենչայի (1828 թ.) դաշնագրերից յետոյ միասնական Աղրբեջանը հարուած ստացաւ և երկու մասի բաժանուեց, որը «...կարելի է համարել Աղրբեջանի ազգի ազգային և ազատատենչական պայքարի սկիզբը»⁵: Արձանագրուում է, որ 1907 թ. Իրանի Սահմանադրական յեղափոխութեամբ ինքնավարութիւն ձեռք բերեց Հարաւային Աղրբեջանի մի մասը, 1918 թ. Սոհամմադ Ամին Ռասուլզադէի ղեկավարութեամբ Հիւսիսային Աղրբեջանը անկախութիւն հռչակեց, 1920 թ. Շեյխ Սոհամմադ Խիաբանիի ղեկավարութեամբ Հարաւային Աղրբեջանի ազգային և ինքնավար պետութիւնը հիմնադրուեց, 1945 թ. Սեյեդ Ջաֆար Փիշկարիի ղեկավարութեամբ Հարաւային Աղրբեջանի ազգային իշխանութիւնը կեանքի կոչուեց, 1980 թ. «Մուսուլման ժողովրդի շարժումը» ճնշուեց, 1991 թ. «Աղրբեջանի ժողովրդական ճակատը» Աբուլֆազլ Էլչիբէյի ղեկավարութեամբ կարողացաւ Հիւսիսային Աղրբեջանում անկախութիւն սուածել և 1991 թ. սկզբներից Հարաւային Աղրբեջանի ազատատենչական պայքարը՝ «Աղրբեջանի ազգային շարժում» անունով կարողացաւ կրկին հրապարակ իջնել⁶:

Ծրագրի մէկ այլ բաժնում նշուած է, որ «...այսօր Հիւսիսային Աղրբեջանի անկախ և սրբազան Հանրապետութիւնը համաշխարհային մակարդակում և Միաւորուած ազգերի կազմակերպութիւնում ներկայացնում է Աղրբեջանի ազգը»⁷:

«ԱՂՐԲԵՋԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ - ԲԻՐԼԻԷ»

2018 թ. սեպտեմբերի 20-ին հրատարակուել է այս քաղաքական կազմակերպութեան պլատֆորմը⁸: Կազմակերպութեան կայքէջի հասցեն է <https://www.birlik.se/>, որում տեղադրուած են «Աղրբեջանի ժողովրդավարական դաշինքի պլատֆորմը», «Մեր ժողովրդավարական պլատֆորմը», «Մեր իսկական հակասութիւնը», «Իրանում թիւրքական ազգային շարժման զուգահեռ ռազմավարութիւնը», «Վերջին նորութիւններ», «Տեսակետներ» և այլ բաժիններ:

¹ Նոյն տեղում:

² <https://diranish.org/> (11.08.2020 թ.):

³ <http://www.araznews.org/fa/> (11.08.2020 թ.):

⁴ <https://diranish.org/%D8%A8%D8%A7%DB%8C%DA%AF%D8%A7%D9%86%DB%8C/2556> (11.08.2020 թ.):

⁵ Նոյն տեղում:

⁶ Տե՛ս նոյն տեղում:

⁷ Նոյն տեղում:

⁸ <https://www.birlik.se/> (28.07.2020 թ.):

Ադրբեջանի ժողովրդավարական դաշինքի պլատֆորմում գրուած է. «Անցեալ հազար տարուայ ընթացքում այս երկրամասը (Իրան-Ս.Մ.) առհասարակ թիրաքական պետութիւնների և կայսրութիւնների (ղազնաւիներ, սելջուկներ, կարա-կոյունլուներ, ակ-կոյունլուներ, սեֆեւիներ, աֆշարներ և դաշարներ) տիրապետութեան ներքոյ է եղել... Իրանի վերջին հարիւր տարուայ պատմութիւնը՝ թիրաք ժողովրդի անկման պատմութիւնն է՝ քաղաքական իշխանութեան բեմահարթակից անկումը մինչև մի գերի և ճնշման ենթակայ ժողովրդի վերածուելուն... 1945 թ. երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով առաջացած քաղաքական տագնապը՝ թիրաք վերնախաւին գործի մղեց և ստեղծեց մէկ այլ առիթ Ադրբեջանում¹ և Իրանում թիրաք ժողովրդի կազմակերպման համար: Ադրբեջանի ազգային իշխանութիւնը՝ Ադրբեջանի դեմոկրատական կուսակցութեան ղեկավարութեամբ և նրա գլուխը կամ վարչապետը՝ Սէյէդ Ջաֆար Փիշևարին և նրա համահարգները յաջողեցին հիմնել Ադրբեջանի ազգային իշխանութիւնը...»²:

Շարունակութեան մէջ խօսուում է Փահլէիների հարստութեան ժամանակաշրջանում թիրաքերի նկատմամբ տեղի ունեցած բռնութիւնների և խտրականութիւնների մասին, որին յաջորդել է Իսլամական Յանրապետութեան նմանատիպ վարքագիծը: Նշուում է, որ Ադրբեջանում թիրաքական ժողովրդավարական-ազգային շարժումը պայթարում է հասնելու համար թիրաք ժողովրդի ժողովրդավարական իղծերին և ազգային ինքնորոշման իրաւունքին³: Սակայն, պլատֆորմում նկարագրուում է նաև, որ Դաշինքը ձգտում է դաշնային Իրանի ձևաւորմանը, որտեղ կամաւոր հիմունքով պետք է հիմնուեն մի քանի հանրապետութիւններ:

Ինչպէս դաշնային Իրանի գաղափարին ձգտող մնացած կազմակերպութիւնների պարագային, այս դէպքում ևս նկատուում է, որ դա ընդամենը առաջին քայլն է անկախութեան հասնելու համար: Դրա վառ ապացոյցը քիչ առաջ մեր նշած հէնց նոյն պլատֆորմից «ազգային ինքնորոշմանը» հասնելու նպատակի արծարծումն է: Ապագայ Ադրբեջանի Յանրապետութեան, ինչպէս նաև միւս հանրապետութիւնների սահմանների ճշտման հարցը՝ յետաձգուում է այն ժամանակուայ, երբ դաշնային Իրանում հանրապետութիւնները կունենան խորհրդարաններ և այդ խորհրդարանները միասնաբար կը քննարկեն սահմանների հարցը:

«Իրանում թիրաքական ազգային շարժման զուգահեռ ռազմավարութիւնը» բաժնում նշուում է, որ հակառակ Իրանում ապրող բազմաթիւ ժողովուրդների, որոնք ապրում են կենտրոնացուած կերպով և որոնց բնակութեան աշխարհագրական սահմանները յստակ են՝ թիրաք ժողովուրդը ցրուած է ամբողջ երկրով մէկ և հետևաբար թիրաք ժողովրդի բնակութեան աշխարհագրական տարածքը սահմանուում է Իրանի Ատրպատականից մինչև Թեհրան, իսկ երկրի մի քանի շրջաններում առանձին թիրաքական կանտոններ:

Կայքէջում բազմաթիւ տեղեր մէջբերուում են Սէյէդ Ջաֆար Փիշևարիի մտքերը: Նա համարուում է իրենց առաջնորդը: Իսկ Փիշևարիի տեսակետները և նրա կապը պանթիրաքիզմի հետ յստակ են: Այլ խօսքով դաշինքը գաղափարական առումով սերում է պանթիրաքիզմից և հետապնդում է անջատողական նպատակ և անկախութեան հասնելու երազանք:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ուսումնասիրած բոլոր կազմակերպութիւնների վերջնանպատակը Իրանի ազերիաբնակ շրջանները Իրանից անջատելն է, որը որոշների դէպքում բացայայտօրէն արտացոլուած է իրենց ծրագրերում, իսկ որոշների դէպքում դա արտայայտուում է քողարկուած

¹ Խօսքը Իրանի Ատրպատականի մասին է:

² <https://www.birlik.se/%d9%be%d9%84%d8%a7%d8%aa%d9%81%d9%88%d8%b1%d9%85-%d8%a7%d8%aa%d8%ad%d8%a7%d8%af-%d8%af%d9%85%da%a9%d8%b1%d8%a7%d8%aa%db%8c%da%a9-%d8%a2%d8%b0%d8%b1%d8%a8%d8%a7%db%8c%d8%ac%d8%a7%d9%86-%d8%a8/>

³ Տէ՛ս նոյն տեղում:

կերպով: Բայց այս կազմակերպությունները իրանական հիմքի վրայ ձևաւորուած պանթիրօթական շարժում չեն, այլ պանթիրօթական գաղափարների մեխանիկական և արհեստական ներմուծողներն են Իրան՝ ուստիեւ տեսաբանական գետնի վրա իրարից չեն տարբերուում:

Պատահական չէ, որ Իրանի իսլամական յեղափոխութիւնից, բայց յատկապէս Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ առաջացան այդ կազմակերպութիւնները: Դա հետևանքն էր աշխարհաբաղաբանական պայմանների փոփոխութեան: Իրանի Իսլամական Զանրապետութեան և Ամերիկայի Միացեալ Նահագների և Իսրայէլ պետութեան թշնամական փոխյարաբերութիւնները և, Իրանի Իսլամական Զանրապետութեան և Թուրքիայի Զանրապետութեան մրցակցութիւնը տարածաշրջանում աւելի մեծ ազդեցութեան դաշտ ունենալու նպատակով՝ պատճառ դարձան, որ այդ երկրները սկսեն փորձել տարբեր ձևերով ճնշել Իրանի ինքնիշխանութեանը՝ տնտեսական պատժամիջոցներից սկսած մինչև էթնիկ խմբերի (քրդեր, ազերիներ, բելուջներ և այլն) հարցերի արհեստական բարձրացում:

Մենք ներկայացրինք **1995 թուականից 2018 թուականի ընթացքում** հիմնադրուած և գոյութեան յայտ ներկայացրած հինգ կազմակերպութիւնների ծրագրերը: Գոյութիւն ունեն այլ կազմակերպութիւններ ևս, որոնց մի մասն ունի հրատարակուած ծրագիր և կանոնագիր, իսկ մի մասի ծրագրերն ու կանոնագրերը հնարաւոր չէղաւ գտնել: Արդեօ՞ք սա վկայում է այն մասին, որ այդ կազմակերպութիւնները լուրջ և իրական կազմակերպութիւններ չեն և պարզապէս միայն անուանապէս գոյութիւն ունեն: Նոյնը կարելի է ասել նաև նշեալ հինգ կազմակերպութիւնների մասին, որոնց գործունեութիւնը գլխաւորապէս պայմանաւորուած է կազմակերպութեան ղեկավարի գոյութեամբ: Թէև որոշ դէպքերում, օրինակ՝ Զ.Ա.Ա.Շ.-ի պարագային, մենք ականատեսն ենք եւրոպական մի քանի քաղաքներում նրա անդամների կամ համակիրների գործունեութեանը՝ ցոյցեր, սեմինարներ և այլն: Սակայն նոյնիսկ այդ պարագային էլ առանցքը մնում է կազմակերպութեան ղեկավարը, որի չլինելով՝ վստահ չի կարելի ասել, որ կազմակերպութիւնը կը շարունակի գոյութիւն ունենալ:

Վերոյիշեալ հինգ, ինչպէս նաև այլ նմանատիպ կազմակերպութիւնների ծրագրերի համեմատական վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ դրանք իրարից շատ չեն տարբերուում և յաճախ իրարից **պատճենուած են կամ պատճենուած լինելու** տպաւորութիւն են թողնում:

Գրեթէ ամենուր հանդիպում ենք Չիյա Գեօբալիի անուանն ու նրա մտքերին: Գեօբալիը իր «Թիրօթականութեան հիմունքները» աշխատութիւնում և «Թուրքանալ, մուսուլմանանալ և արդիականանալ» յօդուածում ներկայացրել է պանթիրօթիզմի մանիֆեստը, որը առանց բացառութեան առկայ է Իրանի ազերիաբնակ շրջանները թիրախ ընտրած կազմակերպութիւնների ծրագրերում և գաղափարախօսութիւններում¹:

Չիշեցնենք, որ Գեօբալիը արձարծում էր «մշակութային թիրօթականութեան» գաղափարը, ըստ որի ազգը լեզուական, կրօնական, բարոյական ու գեղագիտական ընդհանրութիւն ունեցող, այսինքն՝ միևնոյն դաստիարակութիւնը ստացած անհատներից կազմուած մի խումբ է²:

Իրանում պանթիրօթիզմի յատկանիշերից են նաև անջատողականութիւնը, ծաւալապաշտութիւնը, հակահայկականութիւնը, հակաիրանականութիւնը, հակառուսականութիւնը, այլատեսացութիւնը, պատմութեան նենգափոխումը, թիրօթական ցեղերի միասնութեան տարփողումը, կեղծ խորհրդանշանների ստեղծումը և այլն, որոնք, ինչպէս տեսանք, արձանագրուած են նշեալ հինգ, ինչպէս նաև այլ կազմակերպութիւնների ծրագրերում և գաղափարախօսութիւններում:

¹ Սաֆարեան Ա., Չիյա Գեօբալիը և «Թիրօթականութեան հիմունքները», Ե., ԵՊՅ հրատ., 2012, էջ 24:

² Նոյն տեղում, էջ 244:

Sargis Mkrtchian, ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВЕКОВ. В результате исламской революции в Иране отношения между Ираном и Соединенными Штатами Америки и Израилем стали напряженными вплоть до враждебности. С развалом Советского Союза силы, заинтересованные в ослаблении и распаде Ирана, нашли подходящий повод для использования фактора искусственно созданной Азербайджанской Республики против Ирана. Это было хорошим поводом особенно для Турецкой Республики и пантюркистских сил, чтобы следовать своей давнишней мечте. Начали обсуждаться предполагаемые или реальные вопросы этнических групп Ирана.

Обсуждению вопросов идентичности этнических групп Ирана способствовало также установление теократии, которая считала приоритетными не национальные, а религиозные элементы. Это привело к ослаблению национальных элементов идентичности.

В регионах Ирана, населенных азерами, и вне Ирана заявку на существование предъявили многие организации, которые начали обсуждать якобы проблемы азеров Ирана. Однако изучение программ и деятельности этих организаций доказывает, что они преследуют пантюркистские цели, проявляют сепаратистские тенденции, являются антиармянскими, антииранскими и антирусскими, а их программы почти копируют друг друга. Эти организации не создают пантюркистское движение, образованное на иранской почве. Их идеология основана на взглядах Зия Гекальпа, Расулзаде и Пишевари.

В настоящей статье представлены программы пяти организаций, основанных и заявивших о себе с 1995 по 2018 годы, и проанализировано наличие в них пантюркистских идей и целей. Этими организациями являются: Движение национального пробуждения Южного Азербайджана, Новое движение национального пробуждения Южного Азербайджана (YENIGAMOH), Партия независимости Южного Азербайджана, Азербайджанская национальная организация сопротивления, Азербайджанский демократический союз – Бирлик.

Ключевые слова: Иран, азеры, Атрпатакан, Азербайджан, пантюркизм, идеология, Зия Гекальп, Мамед Эмин Расулзаде, Сеид Джафар Пишевари.

Sargis Mkrtchian, ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY. Relations between Iran, the United States, and Israel were strained by the Islamic Revolution in Iran, until it became hostile. With the collapse of the Soviet Union, the forces interested in the weakening and fragmentation of Iran found an opportunity to use the factor of the creation of the artificial Republic of Azerbaijan against Iran. It was especially the best opportunity for the Pan-Turkish forces of the Republic of Turkey to pursue their long-held dreams. The supposed or real issues of the ethnic groups of Iran began to be raised.

The establishment of a religious state in Iran, which gave priority to religious elements over national elements, also contributed to the identification of ethnic groups in Iran. This led to the weakening of the national elements of identity.

In the Azeri-populated areas of Iran and outside the country numerous organizations emerged, which began to raise the issue of Iranian Azeris. However, the study of the programs and activities of these organizations proves that they pursue pan-Turkish goals, have separatist tendencies, are anti-Armenian, anti-Iranian, anti-Russian, and their programs are almost duplicated. These do not form a pan-Turkish movement based on Iran. The ideology of these organizations is based on the views of Ziya Geokalp, Rasulzade u. Pishevari.

This article presents the programs of the five organizations that were established **between 1995 and 2018** and analyzed the existence of pan-Turkish ideas and goals in them.

These organizations are the “National Awakening Movement of South Azerbaijan”, the “New Movement of the National Awakening of South Azerbaijan” (YENIGAMOH), the “Independence Party of South Azerbaijan”, the “National Resistance Organization of Azerbaijan”, the “Democratic Alliance of Azerbaijan – Birlik”.

Key words: Iran, Azeri, Atrpatakan, Azerbaijan, Pan-Turkism, ideology, Ziya Geokalp, Mohammad Amin Rasulzadeh, Seyed Jafar Pischevari.